ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-299-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «06» «07» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Բեռլինի Կարմիր Խաչի «Ֆյուր Արմենիեն» բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Ա.Տեր-Մինասյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հունվարի 12-ի թիվ 27-Ա/2 հրամանով հաստատված «Կերպարվեստի նախագծերի» իրականացման նպատակով հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 5-ի ամփոփիչ նիստի N 4 արձանագրությունը՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005 Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման (տող՝ «Կերպարվեստի նախագծեր» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում «Գրքարվեստ և կալիգրաֆիա 3» ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալ մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 3474.7 հազար (երեք միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար յոթ հարյուր) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված 1-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակեպության կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը << օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. սույն պայմանագրի 7.1 կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն ծրագրի իրականացման և ընթացքի մասին, այդ թվում՝ արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.11. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է *www.minfin.am* հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական

մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Պետական մարմնի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում պետական մարմնի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրա պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2023 հոկտեմբերի 16-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև ս պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30 օրացուցային օրը:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մի կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3. Սույն պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունն կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կող հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքե հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրությ հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցն աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Ե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմեր յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահե մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարմ նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունք արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանա կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջին հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կար պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմա լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքո հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հի կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կր պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջաց վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստա Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմ կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Բեռլինի Կարմիր Խաչի «Ֆյուր Արմենիեն» բարեգործական հիմնադրամ
ք.Երևան,Կառավարական 2 շենք	ք.Գյումրի, Հաղթանակի փ., 25
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011032878	Հ/Հ 2051222035781001
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 05522591
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Հ. Հակոբյան	Ա. Տեր-Մինասյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N
«06» «07» 2023 թ
N ՄՇԴ-299-2023 պայմանագր

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
«Գրքարվեստ և կալիգրաֆիա 3» ծրագրի

1	Կազմակերպության անվանում	Բեռլինի Կարմիր Խաչի «Ֆյուր Արմենիեն» ԲՀ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ ք. Գյումրի, Հաղթանակի 25
3	Ծրագրի անվանում	Գրքարվեստ և կալիգրաֆիա 3
3.1	Բովանդակություն	«Գրքարվեստ և կալիգրաֆիա 3» նախագծի նպատակն է գրքարվեստի ոլորտում մասնագիտացած արվեստագետների միջոցով հանրահռչակել ու բարձրացնել ձեռագրի և ձեռակերտ գրքի դերը, ինչպես նաև ներկայացնել այսօր Հայաստանում առկա հեռանկարներն այս ոլորտում: Ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2023 թվականի սեպտեմբեր ամսին: Նախագիծը ներառում է ցուցահանդեսներ, դասախոսություններ, տոնավաճառ և վարպետաց դասեր՝ գրքարվեստի և կալիգրաֆիայի վերաբերյալ: Որպես նախագծի հիմնական փորձագետ կհրավիրվի երևանաբնակ արվեստագետ, հայտնի գեղագիր Ռուբեն Մալայանը: Նախագծի առաջին օրը տեղի կունենա ծրագրի բացումը, ինչպես նաև Ռուբեն Մալայանի աշխատանքների ցուցադրությունը Գալերի 25 ցուցասրահում: Արվեստագետը կանցկացնի զրույց-դասախոսություն հայ ժամանակակից գեղագրության վերաբերյալ: Հաջորդ օրը Ռ. Մալայանը կանցկացնի վարպետաց դաս Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի, ինչպես նաև քաղաքի այլ բուհերի և ուսումնարանների ուսանողների հետ: Ծրագրի երրորդ օրը տեղի կունենա գերմանացի նկարիչ Հայնց Ֆերբերտի բնօրինակ աշխատանքների ցուցադրությունը հայոց տառերի թեմայով: Նույն օրը տեղի կունենա երևանաբնակ արվեստագետ՝ նկարիչ-գրաֆիկ Տարոն Սահարյանի դասախոսությունը նախամաշտոցյան գրերի վերաբերյալ: Չորրորդ օրը կանցկացվի հանդիպում-վարպետաց դաս գերմանացի մեկ այլ արվեստագետի՝ Էլկե Բուշկեի հետ՝

		«Կալիգրաֆիայի կիրառությունը ժամանակակից արվեստի մեջ» խորագրով: Ծրագրի վերջին՝ հինգերորդ օրը տեղի կունենա ցուցահանդես-տոնավաճառ, որին սեփական աշխատանքներով մասնակից կդառնան Գեղագիտության ազգային կենտրոնի Գյումրու և Վանաձորի մասնաճյուղերի Շիրակի մարզի Կրաշեն համայնքի ասեղնագործության խմբակի, Ս. Դ. Մերկուրովի անվան նկարչական դպրոցի, Գեղարվեստի ակադեմիայի «Խմբակ A3» և «Վառեմ-Մարեմ» արվեստի ստուդիաների սաները: Տոնավաճառին կցուցադրվեն նաև «Գրքարվեստ և կալիգրաֆիա 2» նախագծի շրջանակներում տեղի ունեցած նկարիչ Վահան Թոփչյանի վարպետաց դասի արդյունքում երեխաների կողմից ստեղծված ձեռակերտ բացիկները: Որպես նախագծի փակում կկայանա «Նռանե» բենդի համերգային ծրագիրը:
3.2	Նպատակ	**Նպատակներն են՝** • Գրքի և գրքարվեստի վերաարժևորում • Ձեռակերտ գրատպության զարգացում, • Գրքերի նկարազարդման դպրոցի զարգացում, • Ոչ նյութական մշակութային ժառանգության արժևորում • Ժամանակակից կալիգրաֆիայի ներկայացում և զարգացում, • Ժամանակակից գեղագիրների հանրահռչակում, • Նոր մեթոդների կիրառման միջոցով արվեստի թարմացում, • Ժամանակակից գրողների ստեղծագործությունների պրոպագանդում, • Գեղեցիկ գրավոր խոսքի խրախուսում, • Գյումրու մշակութային կյանքի աշխուժացում, • Երիտասարդների և երեխաների մոտ հետաքրքրության զարգացում գրքարվեստի և գեղագրության վերաբերյալ:
3.3	Անցկացման ժամկետ	01.09.2023-15.10.2023
3.4	Անցկացման վայր	ՀՀ, քաղաք Գյումրի

3.5	Ակնկալվող արդյունքներ	Նախագծի իրականացումից ակնկալվում է ստանա հետևյալ արդյունքները. • Հայերեն լեզվով ձեռակերտ գրքերի ստեղծում, • Ուսանողների կողմից ստեղծված նորարարակա արվեստի գործեր, •Կալիգրաֆիայի մեթոդով ստեղծված գրքեր, բացիկնե այլ կիրառական իրեր, •Ձեռակերտ գրքերի միջազգային ցուցահանդեսներ մասնակցություն, •Գրքի նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն, • Գրքարվեստի հանրայնացում, •Կայուն հետաքրքրություն հայկական ոչ նյութակա մշակութային ժառանգության հանդեպ, •Գրքարվեստում մասնագիտացած արվեստագետներ հանրահռչակում, •Կապի ստեղծում հանրապետության տարբ մշակութային կենտրոնների և մարդկանց միջև, ովքե մասնագիտացած են այս ոլորտում:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Նախագիծը ներառում է. 3 ցուցահանդես 4 դասախոսություն 3 վարպետաց դասեր 1 ցուցահանդես-տոնավաճառ 1 համերգ 5 հիմնական արվեստագետների մասնակցություն

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի
նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Բեռլինի Կարմիր Խաչի «Ֆյուր Արմենիեն»
բարեգործական հիմնադրամ
ք.Գյումրի, Հաղթանակի փ., 25
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2051222035781001
ՀՎՀՀ 05522591

Տնօրեն՝

Ա. Տեր-Մինասյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված
«06» «07» 2023
N ՄՇԴ-299/2023 պայմանագ

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Գրքարվեստ և կալիգրաֆիա 3» ծրագրի ծախսերի

	Ծախսատեսակի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Գումարը, (հազար դրամ)
1.	**Աշխատանքի վարձատրություն (ներառյալ հարկերը)* այդ թվում՝**				**600.0**
1.1	ծրագրի ղեկավար	մարդ	1	200000	200.0
1.2	հաշվապահ	մարդ	1	150000	150.0
1.3	նկարիչ-ձևավորող	մարդ	1	250000	250.0
2.	**Կազմակերպչական ծառայություններ, այդ թվում՝**				**1,053.0**
2.1	Էքսպոզիցիայի կազմակերպում ՝	հատ	1	80000	80.0
2.2	լուսանկարահանում՝ 5 օր x 28000 դրամ =140000 դրամ	հատ	1	140000	140.0
2.3	վարպետաց դաս՝ 4 մարդ x 6 ժամ	մարդ/ժամ	24	4500	108.0
2.4	արվեստագետ	հատ	1	150000	150.0
2.5	երաժիշտ	հատ	1	100000	100.0
2.6	սրահի վարձակալում՝ 5 օր x 45000 դրամ = 225000 դրամ	հատ	1	225000	225.0
2.7	աուդիո տեխնիկայի վարձակալում՝ (4 խոսափող, 4 խոսափողի կանգնակ,4 նոտակալ, 2 բարձրախոս,2 բարձրախոսի կանգնակ, 2 մոնիտոր,ղեկավարման վահանակ,մալուխներ)	հատ	1	100000	100.0
2.8	նկարահանում և մոնտաժում	հատ	1	150000	150.0
3	**Տրանսպորտային ծառայություններ, այդ թվում՝**				**99.0**
3.1	*Վանաձոր-Գյումրի-Վանաձոր*	հատ	1	35000	35.0
3.2	Կրաշեն-Գյումրի-Կրաշեն	հատ	1	12000	12.0
3.3	*Երևան-Գյումրի-Երևան* 2 հատ x 26000 դրամ =52000 դրամ	հատ	1	52000	52.0
4	***Տպագրական և գովազդային ծառայություններ, այդ թվում՝***				**616.0**
4.1	բաներ (148 սմ x 108 սմ)՝ 1 հատ x 25000 դրամ =25000 դրամ	հատ	1	25000	25.0
4.2	պաստառ (A2 ֆորմատ)՝ 30 հատ x 4000 դրամ =120000 դրամ	հատ	1	120000	120.0
4.3	բրոշյուր 50 հատ x 1000 դրամ =50000 դրամ	հատ	1	50000	50.0
4.4	ամփոփիչ գրքույկ 30 հատ x 7500 դրամ =225000 դրամ	հատ	1	225000	225.0
4.5	անվանաքարտ 20 հատ x 300 դրամ =6000 դրամ	հատ	1	6000	6.0
4.6	հրավիրատոմս՝ 30 հատ x 500 դրամ =15000 դրամ	հատ	1	15000	15.0
4.7	շապիկների ձեռք բերում և տպագրություն՝ 15 հատ x 5000 դրամ =75000 դրամ	հատ	1	75000	75.0
4.8	գովազդային հոլովակի պատրաստում (30 վրկ.)	հատ	1	50000	50.0
4.9	ամփոփիչ հոլովակի պատրաստում (3 րոպե)	հատ	1	50000	50.0
5.	**Նյութերի և անհրաժեշտ պարագաների ձեռք բերման ծախսեր՝**				**359.6**

5.1	Նկարի շրջանակ՝ 30 հատ, թուղթ՝4 տուփ, երկկողմանի կպչուն ժապավեն ՝ 5 հատ, մատիտ, գրիչ՝ 50 հատ, վրձին՝ 4 տուփ, ներկ (տուշ)՝ 10 հատ, կավ (կարմիր,սպիտակ 24 կգ)՝ 2 տուփ, նոթատետր՝ 30 հատ				359.6
6.	Հյուրանոցային ծախսեր, այդ թվում՝				168.0
6.1	հայաստանյան արվեստագետներ՝ 1 մարդ x 2 օր 1 մարդ x 1 օր	մարդ/օր	3	20000	60.0
6.2	օտարերկրյա արվեստագետներ՝ 2 մարդ x 2 օր	մարդ/օր	4	27000	108.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				2,895.6
	ԱԱՀ**				579.1
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				3,474.7

* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով

** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011032415 ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Բեռլինի Կարմիր Խաչի «Ֆյուր Արմենիեն»
բարեգործական հիմնադրամ
ք.Գյումրի, Հաղթանակի փ., 25
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2051222035781001 ՀՎՀՀ 05522591
Հեռ.՝ 055 40 83 36

տնօրեն՝
Ա. Տեր-Մինասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«06» «07» 2023 թ.
N ՄՇԴ-299-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության
պատասխանատու՝

_____/_____/

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ

_____ /_____/

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«06» «07» 2023 թ.
N ՄՇԴ-299-2023 պայմանագրի

Կազմակերպություն	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ---- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.